ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
07806692

հեռ. /0267/ 2-25-89 Ֆաքս ,fax /0267/ 2-25-89 E-mail: berdmedikal@yandex.com
ՀՀ Տավուշի մարզ ք.Բերդ Ա.Մանուկյան 25

28 օգոստոսի 2024թ. 349

Որոշում
N ԲԲԿ-2024/3
"Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02»** և **«ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04»**

Մասնակից՝ **"Ագաստ» ՍՊԸ**
/ՀՎՀՀ՝ 00435781, հասցե՝ ք. Երևան, Տ. Պետրոսյան 31/1 /

1. Հիմնավորում և եզրահանգում

12.08.2024թ.-ին «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ -ը (այսուհետև՝ Գնորդ) միակողմանի լուծել է «Ագաստ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Վաճառող) միջև 21.02.2024թ.-ին կնքված «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/02-3» ծածկագրերով դեղորայքի մատակարարման պայմանագիրը՝ 20-րդ (Անալգին 50% 2մլ) և 25-րդ (Ասկորբինաթթու, 50մգ/մլ, 2մլ) չափաբաժինների մասով և 24.02.2024թ.-ին կնքված «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/04-3» ծածկագրերով դեղորայքի մատակարարման պայմանագիրը՝ 37-րդ (Նատրիումի թիոսուլֆատ 30% 5 մլ), 38-րդ (Դիմեդրոլ 1% 1մլ) և 49-րդ (Նատրիումի քլորիդ լուծույթ 0,9% 100մլ) չափաբաժինների մասով (այսուհետև՝ Պայմանագրեր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Մինչ օրս «Ագաստ» ՍՊ ընկերության կողմից չեն վճարվել պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

“Ագաստ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Բերդի ԲԿ» ՓԲԸ տնօրենի պժկ՝ Հ. Ծատուրյան